***Արձանագրություն N 2***
***Պետական առողջապահության գործակալության (ՊԱԳ) շենքի վերանորոգման (ընթացիկ) աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2025/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի***

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Արսեն Բաբայան |
| Հանձնաժողովի անդամներ | Վահան Վահանյան, Հայկ Խուրշուդյան, |
| Հանձնաժողովի քարտուղար | Արմինե Գալուստյան |

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Ա. Բաբայան)***

Ընդունել ի գիտություն, որ 05.01.2026թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի փետրվարի 4-ը, ժամը 15:00-ն:

2025 թվականի փետրվարի 4-ին ժամը 15:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Բիդեք» ՍՊԸ | ք. Երևան, Սասունցի Դավիթ 87ա, 011 575522, 099 10 00 74, bedeck.llc@mail.ru, info@bedeck.am | 00450801 |
| 2 | «Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «Դիսի-Տելեքոմ» ՍՊԸ ՀԳ | Սյունիքի մ, ք. Գորիս, Վերիշեն, 13փ, փ 5, 091 54 20 06 dadiinvest7@gmail.com<br>Սյունիքի մ, ք. Գորիս, Յոլյան փ, 30, 093 42 66 93 eldogare@yandex.ru<br>Ք. Երևան, Հ. Հովսեփյան, 10/1, 27, 010 42 14 33, info@dctelecom.am | 09215986<br>09210321<br>00102283 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

---

***(Ա. Բաբայան)***

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,***

---

***(Ա. Բաբայան)***

«Բիդեք» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերի պահանջներին:

«Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «Դիսի-Տելեքոմ» ՍՊԸ ՀԳ կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ «Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «ԴԻՍԻ-ՏԵԼԵՔՈՄ» ՍՊԸ միջև 30.01.2026թ կնքված համատեղ գործունեության (Կոնսորցիումի) պայմանագրի, որի վերաբերյալ 06.02.2026թ ծա նուցվել է մասնակցի հետևյալ բովանդակությամբ.

➢ *Հարգելի մասնակից:*

*«ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2025/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես, «Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «ԴԻՍԻ-ՏԵԼԵՔՈՄ» ՍՊԸ միջև 30.01.2026թ կնքված համատեղ գործունեության (Կոնսորցիումի) պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) 3.1 կետով նախատեսվում է, որ «3.1 Կողմերին տրամադրվող՝ սեփականության իրավունքով նրանց պատկանող միջոցների սեփականության իրավունքը, **համատեղ***

***գործունեության իրականացումից առաջացած արդյունքը, ինչպես նաև այդ գործունեության արդյունքում գոյացած արտադրանքը*** *և եկամուտները համարվում են նրանց համատեղ սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով և օրենսդրությամբ:» Այնինչ համատեղ գործունեությունը իրականացվում է Պատվիրատուի համար աշխատանքների կատարման նպատակով և այդ աշխատանքների կատարման արդյունքը չի կարող համարվել համատեղ գործունեության կողմերի համատեղ սեփականություն:*

*Առաջարկում ենք 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3.1 Կողմերին տրամադրվող՝ սեփականության իրավունքով նրանց պատկանող միջոցների սեփականության իրավունքը,* ***համատեղ գործունեության իրականացման ժամանակ կատարված աշխատանքների արդյունքում գոյացած եկամուտները*** *համարվում են նրանց համատեղ սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով և օրենսդրությամբ:»*

*Նույն պայմանագրի*

*4.1 կետով սահմանված է, որ «Այն կողմը, որը ցանկանում է դադարեցնել սույն Պայմանագիրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է այլ Կողմերին ոչ ուշ, քան նախատեսված դուրս գալու օրվանից առնվազն 3 ամիս առաջ:*

*Տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետով և «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2026/9» ծածկագրով հրավերի 2.6 կետի 2-րդ ենթակետով սահմանված է, որ «Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները»:*

*Պայմանագրի 6.1 կետով սահմանված է, որ «Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու պահից և գործում է մինչև ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2025/9* ***մրցույթի շրջանակներում նախատեսված աշխատանքների ավարտը և արդյունքը պատվիրատուին ամբողջությամբ հանձնելու ավարտը****»: Մասնակցի Պատվիրատուի նկատմամբ ստանձնած պարտավորությունները չեն կարող ավարտվել աշխատանքների ավարտով, այն գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, ներառյալ երաշխիքային ժամկետները:*

*Առաջարկում ենք 6.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու պահից և գործում է մինչև ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2025/9* ***մրցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ողջ ծավալով կատարումը****»:*

*Շտկված հստակեցված տարբերակները սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ armine.galustyan@moh.am էլեկտրոնային հասցեին մինչև 09.02.2026թ. ժամը 23.59: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1702):*

**06.02.2026թ.**

***Հանձնաժողովը որոշեց՝***

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «Դիսի-Տելեքոմ» ՍՊԸ ՀԳ-ին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**Ընդունել ի գիտություն՝**

Մասնակիցը ծանուցմամբ նշված էլեկտրոնային փոստին սահմանված ժամկետում ներկայացրել է անհամապատասխանությունների շտկումները: Շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

**09.02.2026թ.**

***Հանձնաժողովը որոշեց՝***

«Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «Դիսի-Տելեքոմ» ՍՊԸ ՀԳ և «Բիդեք» ՍՊԸ հայտերը գնահատել բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 4. Մասնակիցների առաջարկած գների մասին

---

**(Ա. Բաբայան)**

Ստորև ներկայացվում են մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները

| Չ/հ | գնման առարկայի անվանումը | նախահաշվային գին | մասնակիցների անվանումը | մասնակիցների գնային առաջարկները | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդհանուր |
| 1 | Պետական առողջապահության գործակալության (ՊԱԳ) շենքի վերանորոգման (ընթացիկ) աշխատանքներ | 248,097,410 | «Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «Դիսի-Տելեքոմ» ՍՊԸ ՀԳ | 172,310,000 | 34,462,000 | 206,772,000 |
| | | | «Բիդեք» ՍՊԸ | 184,005,000 | 36,801,000 | 220,806,000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

### 5. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

---

**(Ա. Բաբայան)**

**09.02.2026թ.**

**Հանձնաժողովը որոշեց՝**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ընտրված մասնակից ճանաչել «Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «Դիսի-Տելեքոմ» ՍՊԸ ՀԳ-ն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

### 6. Ընթացակարգի ամփոփման մասին

---

**(Ա. Բաբայան)**

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝ «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2025/6» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ավարտին հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել «Դադի Ինվեստ» ՍՊԸ, «Էլդոգար» ՍՊԸ և «Դիսի-Տելեքոմ» ՍՊԸ ՀԳ-ին 206,772,000 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**Հանձնաժողովի**

նախագահ՝ ____________________ Ա. Բաբայան

անդամներ՝ ____________________ Վ. Վահանյան

____________________ Հ. Խուրշուդյան

քարտուղար՝ ____________________ Ա. Գալուստյան